ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում (ցույց տալ կոնկրետ թեմայի ուսուցման օրինակով)

Կատարող՝ Սիլվա Ղալդունց

Դպրոց՝ Ազատաշենի հիմանական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանների» Հ/Կ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Բովանդակություն

Բովանդակություն……2
Ներածություն.....3
Գլուխ 1 Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում
1.1 Արժեքների ընկալումը, դրանց կարևորությունը կրթական համակարգում……6
1.2 Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները, դրանց դրսևորումը ուսուցման գործընթացում……8
Գլուխ 2
Արժեքների ընկալման, արժեհամակարգի ձևավորումը Դերենիկ Դեմիրճյանի
«Ավելորդը» պատմվածքի միջոցով……..12
Եզրակացություն……16
Օգտագործված գրականության ցանկ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչի՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի գծով սովորողների պատրաստվածությունը ներկայացնող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է ապահովի ուսումնական հաստատությունը: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 136 որոշման համաձայն՝[1] որպես հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջադյունքներ՝ շրջանավարտը պետք է ճանաչի և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասով, ցուցաբերի հարգանք մարդկանց նկատմամբ, ընկալի յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ և արժեքավոր լինելը, ճանաչի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելությունը. ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք, ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ, անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկույթը, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները, դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում, ներկայացնի հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում, կարևորի իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում:

Հայոց լեզու և գրականություն (այդ թվում՝ մայրենի) առարկաների ուսուցումը կրթության այն բովանդակության տիրույթնէ, որն ապահովում է սեփական մտքերը հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով արտահայտելու, ազատ հաղորդակցվելու, կրթության

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, հայ և արտասահմանյան գրականության ստեղծագործություններ, ինչպես նաև ուսումնական այլ առարկաներ ուսումնասիրելու կարողության, ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, լեզվամտածողության, քննադատական, հուզական-պատկերավոր մտածողության ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը ողջ կյանքի ընթացքում:

Նոր սերնդի արժեքային համակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում բավականին լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը (ուսումնական հաստատությունը), որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտության ճյուղերը, այլ նաև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրներից է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որև մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի ուսումնական հաստատությունում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր դեր ունեն ոչ միայն համամարդկային, այլ հենց հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնադիրումն ու դրանց ուսուցումը: Հենց այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Արժեքային համակարգի ձևավորման նպատակն է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- ✓ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- ✓ կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը, դրսևորի դրան հասնելու ձգտումը,կամք,
- ✓ ունենա ազգային ինքնագիտակցություն,
- ✓ կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- ✓ ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- ✓ գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

- ✓ գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- ✓ գիտակցի, որ կյանքում իր համար կարեւորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...

Հետազոտության **նպատակը** տարբեր հնարների, մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների արժեհամակարգի ձևավորումն է, վերլուծական կարողությունների, քննադատական մտքի զարգացումը, որ մարդը չվերածվի միայն տնտեսական արժեք ունեցող մարդկային կապիտալի՝ անձնային թույլ որակներով, մարդկային պարզունակ ընկալումներով:

Թեման **արդիական** է, քանի որ տեխնիկական հեղաշրջման այս հարափոփոխ դարում, երբ ամեն ինչ մեքենայացվում է, թվայնացվում, այժմ գերիշխող է անհատի էգոն: Հաճախ նայում ենք, բայց չենք տեսնում, զգացմունքները բթանում են, բովանդակությունից առավել կարևորում ենք ձևը, սիրուն փաթեթավորումը: Մինչդեռ փոխհարաբերություններում կարևոր են մարդկայինը, խիղճը արթուն պահելը, ազնվությունը, անարդարությանն արձագանքելը, հանդուրժողականությունը, կարեկցանքը, գութը, էմպատիան: Ցավ զգում են շատերը, բայց ոչ բոլորն են ունակ ուրիշի ցավով ապրելու, ապրումակցելու:

ԳԼՈՒԽ 1 Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

1.1 Արժեքների ընկալումը, դրանց կարևորությունը կրթական համակարգում

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» հասկացությունը: Արժեքն այն երևույթն է մեր կյանքում, որի դիմաց մենք «գին» ենք վճարել: Վճարի տեսակը կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման: Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է[2]: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է

[2] Արամ Փախչանյան, «Այբ» հիմնադրամի համահիմնադիր եւ Հոգաբարձուների խորհրդի նախագահ

արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայմանը: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Եթե փորձենք ամփոփել, ապա հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա ճիշտ արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ հաստատուն են էթիկական նորմերը, իսկ աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և' ցավ, և' ուրախություն, ունենա դժվարություններ ու հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի արդյունքում կձևավորվեն իրական արժեքներ, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտություններ:

1.2 Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները, դրանց դրսևորումը ուսուցման գործընթացում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընմբռնվում է բավական լայն շառավիղով, առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, իմացական, հոգևոր, մշակութային, էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է մարդու մարդու բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը մանկավարժին ոչ հարիր մոտեցում է: Արժեհամակարգը լիակատար է և ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մանսավորապես՝ անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որ յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենիքի նկատմամբ սիրո, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները [3] : Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, իր իսկ ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը

[3] .Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան., 2002

հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործող անհատակություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսության, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան, առավել հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կենսակերպը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունած կաղապարներն ընդօրինակելու միջոցով[4]: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունը, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ոի շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցակցնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը

[4] Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակության կոլեկտիվում, Երևան,1986թ.,

բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի աստիճանակարգությանը: Սակայն պետք է նշել, որ այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ձևավորումն» է: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն)[5]: Հեղինակավոր մարդ կարող են լինել նաև հենց աշակերտի դասղեկը, դպրոցի տնօրենը, ուսուցիչը: Աշակերտը կարող է նրանցից ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես էլ բացասական: Ցավոք, բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնավոր գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ մանկավարժը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովադակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք [6] : Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորության տալով տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական գործունեության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում, դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ

[5] Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ»Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020

[6] Աշիկյան Ա., «Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում» Երևան 2017թ

համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները [7] : Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացած կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի եւ թեմայի ուսումնասիրական հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերու: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական,խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ ,արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունը, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն առավել ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունը, գործում է անկաշկանդ, որն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ[8]: Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

---

[7] Կրթական քաղաքացիական նախաձեռնություն, Սկզբունքներ, ռեսուրսներ, գործիքներ, Երևան 2019

[8] Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., <<Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում>> Երևան 1987թ.,

Գլուխ 2 Արժեքների ընկալման, արժեհամակարգի ձևավորումը Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի միջոցով

Մարդու հոգու խորքը թափանցող, վերլուծական կարողություններ առաջացնող, արժեհամակարգը ձևավորող, այդ թվում՝ փոխող, գործերից է Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը: Այս պատմվածքը ուսումնասիրում ենք 7-րդ դասարանում, ուսուցման ծրագրով հատկացված է 5 դասաժամ: «Ավելորդը» Դեմիրճյանի հոգեբանական շատ նուրբ ու խոր պատմվածներից մեկն է, որը յուրաքանչյու մարդու հոգին տակնուվրա է անում: Հաշվի առնելով երեխաների տարիքային, անհատական ու հոգեբանական առանձնահատկությունները, վարքն ու միջանձնային հարաբերությունները՝ թիրախավորել ենք աշակերտների արժեհամակարգի ձևավորումը, արժեքների ճիշտ ընկալումն ու դրանց գնահատումը:

Փորձենք հնարավորինս հակիրճ վերաշարադրել պատմվածքը: Պատմվածքում Դեմիրճյանը պատկերել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներին վերաբերվող կյանքի մի դրվագ: Ռուսական բանակը թուրքերի հետ բախվել էր հայկական սահմանների վրա: 1914 թ. Դեկտեմբերի 14-ին թուրքերն առաջ էին շարժվում Սարիղամիշի ուղղությամբ: Ռուսներն նրանց առաջխաղացումը կասեցնում են, իսկ դեկտեմբերի 22-ին հասցնում ջախջախիչ հարված:

Պատմվածքի հերոսներն են Հաճի աղան, որը խանութպան է, 60-70 տարեկան, նույնպես խանութպան նրա քառասունամյա որդին՝ Շմավոնը, մյուս որդին՝ Հակոբը, կաղ գործակատարը, հարևան խանութպան Կորկոտենց Եղիշը, հյուսն՝ Պողոսը, Հաճի աղայի աշակերտը, մեծ հարսը, փոքր հարսը՝ Եսթերը, Հաճի աղայի թոռները՝ Շողոն, Կարոն, Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը, Հաճի աղայի անդամալույծ քույրը՝ Սրբունը, հարևան մի կին, զվարճաբան Գարանը, սահնակապանը, վանքի քահանան, խոստովանահայրը:

Պատմվածքի սեղմն ընդգրկման մեջ Դեմիրճյանը ստեղծել է պատերազմի գոտում հայտնված սահմանամերձ փոքրիկ քաղաքի, այդ քաղաքի բնակիչների և մասնավորապես Հաճի աղայի գերդդաստանի ու հատկապես իր՝ Հաճի աղայի շատ տպավորիչ կերպարները:

Հաճի աղան գործնական, հաշվենկատ և հպարտ մարդ է: Նա թեև առաջացած տարիքում է, բայց գերդաստանի ղեկը դեռևս նրա ձեռքին է:

Թշնամու առաջխաղացման լուրը լսելուն պես նա արագ մտածում է, որ առաջինը լինելու պահն արդեն ձեռքից բաց է թողել: Այդ հապաղումն է պատճառը, որ նրա որդիները կարողանում են ոչ թե ֆուրգոն՝ ձիակառք վարձել, այլ սահնակ: Նա կարգադրում է արագ հավաքել անհրաժեշտ իրերը:

Հաճի աղայի հետ էր ապրում նրա քույրը՝ Սրբունը, որը ամուսնու մահից հետո ծանր հիվանդացել էր և դարձել անդամալույծ: Հաճի աղան իր պատվի համար քրոջը անկյուն է հատկացրել սեփական տանը: Սրբունը շատ բարի ու գթառատ կին էր, և որպեսզի տանեցիների համար հոգս չլիներ, կար ու կարկատանով օգնում էր նրանց:

Քաղաքը լքելու ու տնից հեռանալու պահին Հաչի աղայի հաշվենկատ միտքը այսպիսի վճիռ է կայացնում՝ ավելի լավ է խանութների ապրանքների մի մասը փրկել՝ ընտանիքը հետագայում սովի չմատնելու համար, քան իրենց հետ տանել անդամալույծ քրոջը: Ընտանիքը դեմ էր այդ վճռին,հատկապես Հաճի աղայի կինը ՝ Հաճի մարը: Բայց Հաճի աղայի խոսքը օրենք էր:

Սրբունը շատ երախտագետ էր և մտահոգված էր եղբոր ճակատագրոց. Հանկարծ նրան մի բան չպատահի: Հրաժեշտի պահին, երբ եղբայրը ձեռքտ դնում է քրոջ ձեռքին, Սրբունը, արցունքն աչքերին, նրան է նվիրում լավորակ բրդից հյուսած ձեռնոցը:

Տագնապալի պահերն անցնում են: Հաճի աղայի ընտանիքը փրկվում է: Լուրեր են հասնում, որ Սրբունը անհայտ կորել է: Կարելի է ընթադրել, որ կա'մ թուրքերն են նրան սպանել, կա'մ ինքնասպանությամբ ինքն է վերջ տվել իր կյանքին:

Հաճի աղան դրանից հետո ծանր հոգեբանական ապրումներ է ունենում: Նա խորապես զղջում է իր հաշվենկատ արարքի համար: Մի օր առավոտյան արթնանում և գնում է եկեղեցի: Գումար է տալիս քահանային, նրան գումար է տալիս նաև աղքատներին բաժանելու համար:

Հաճի աղան հոգեպես արդեն կոտրվել էր: Նա անկողին է ընկնում, խոստովանահայր կանչում, կրկին գումարներ է շռայլում և մի կապոց էլ տալիս է վերջում՝ ավելորդի հոգու համար: Ավելորդը Սրբունն էր՝ իր հարազատ քույրը, անդամալույծը, որի համար նա տեղ չգտավ սայլակի մեջ: Բայց վերջում Հաճի աղան գիտակցում է իր ավելորդ լինելը և այդ գիտակցությամբ էլ ավարտում կյանքը:

Դասը սկսեցի «խղճի խայթ» հասկացության մասին խոսելիս: Սկսեցինք երեխաների հետ միասին պատմել մեր կյանքից դրվագներ, որոնց մասին հիշելիս մեզ վատ ենք զգում: Աշակերտները սկսեցին մտաբերել և պատմել դեպքեր, որտեղ իրենց այլ կերպ կդրսևորեին, եթե նույն իրավիճակը լիներ այդ պահին: Ի վերջո, եթե մի փոքրիկ համարձակություն

ունենանք ինքներս մեզ խոստովանելու, ապա բոլորս էլ կռիվ ենք տալիս մեր խղճի հետ, երբեմն մեր խղճին դեմ գնում՝ արդարացնելով այս կամ այն արարքը, հետո փորձում ենք հաշտվել հետը: Կարևոր է նաև այն փաստը, որ երեխաները զգան՝ մենք էլ ենք իրենց նման, սխալվում ենք, զղջում, ափսոսում: Երբ երեխաները մեզ ընդունում են որպես ավագ ընկեր, միայն այդ դեպքում են վստահում մեզ, անկեղծանում մեզ հետ: Մտերմիկ զրույց ունենալուց հետո, սկսեցինք քննարկել յուրաքանչյուր արարքի դրդապատճառները, թե ինչու ենք այդ պահին այդպես վարվել, և թե ինչն է մեզ ստպել զղջալ:

Խիղճը մեր արարքների ներքին գիտակցում ու գնահատումն է, մեր վարքագծօ բարոյականության պատասխանատվության զգացումը: Այն բարոյագիտության կատեգորիա է, որը բնութագրում է անհատի ՝ ինքնուրույն իր համար բարոյական պարտականություններ ձևավորելու ընդունակությունը: Հաջորդ երկու դասաժամերին միասին ընթերցեցինք <<Ավելորդը>> պատմվածքը՝ քննարկելով և վերլուծելով յուրաքանչյուր պարբերությունը: Ապա սկսեցինք վերլուծել յուրքանչյուր կերպարի խոսքը: Աշակերտները սկսեցին մեկնաբանել իրենց տեսանկյունից, թե ինչպես կվարվեին իրենք, եթե լինեին պատմվածքի տվյալ հերոսի դերում:

Շատ կարևոր է, որպեսզի աշակերտը իր միտքը շարադրելիս լինի անկաշկանդ, ունենա հնարավորություն արտահայտելու իր մտքերը առանց այն մտավախության, որ իր տեսակերտը սխալ է: Աշակերտների մասը փորձում էր հասկանալ Հաճի աղային, մյուսները մեղադրում էին ՝ առանց գեթ մեկ նշույլ մեղմացուցիչ հանգամանք հաշվի առնելու:

Հեղինակը պատմվածքի սեղմ նկարագրում է կարողացել է շատ ցայտուն և կերպավորված ներկայացնել յուրաքանչյուր հերոսի արժեհամակարգ: Արդյունքում կարող ենք առանձնացնել.

- Առողջությունը,
- Սերը, ընտանիքը, երեխաները,
- Ընկերների հետ շփումը,
- Ինքնակառավարումը աշխատանքի մեջ
- Նյութական բարեկեցությունը,
- Հոգևոր աճը, կրոնը
- Հաճույքը,
- Սոցիալական հոգեվիճակը,
- Խղճի խայթի զգացումը,

- Ընտանիքում բեռ լինելու, «ավելորդ» համարվելու զգացումը,
- Ազատությունը,
- Ներելու կարողությունը,
- և այլն:

Եթե փորձեբք շատ հակիրճ ամփոփել Հաճի աղայի և Սրբունի արժեքային համակարգը, ապա Հաճի աղան գերապատվություն տալով մի արժեքին՝ նյութական բարեկեցությանը, զոհաբերեց մյուսը՝ հարազատ քրոջ հանդեպ ունեցած սերն ու պատասխանատվությունը: Սրբունը՝ ունենալով մեծ ու բարի սիրտ կարողացավ ներել եղբորը, քանի որ Սրբունի արժեքային համակարգում «սեր, ընտանիք, պատասխանատվություն ընտանիքի անդամի նկատմամբ» արժեքները ունեին բարոյական խորտ արմատներ: Անգամ « ավելորդ» լինելու զգացումը չստիպեց Սրբունին չարանալ իր եղբոր հանդեպ, ընդհակառակը՝ շարունակել հոգ տանել եղբոր և եղբոր ընտանիքի հանդեպ ավելի մեծ եռանդով և սիրով: Պետք է նշել, որ աշակերտները կարողացան լիովին ընկալել պատմվածքի խորը փիլիսոփայական միտքը, սովորեցին ըմբռնել և ներել դիմացինի սխալը, ոչ ճիշտ վարքագիծ ցուցաբերած մարդուն ներել ու պատասխան սիրով՝ չարախոսելու և մեղադրելու փոխարեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության թեման ունի կենսական նշանակություն Հայաստանի և հայ ժողովրդի համար, քանի որ խոսքը գնում է արժեհամակարգի ձևավորման մասին, իսկ ամեն մի ժողովդրի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժանագած ազգային արժեքները:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի դեր ունի հատկապես հայ գրականություն առարկան: Ուսումնական հաստատություն երեխաները հայ գրականության ծրագրի շրջանակներում են ծանոթանում հազարամյակների պատմություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայ գրականության առարկայի դասավանդման արդյունքում երեխաները ծանոթանում և ուսումնասիրում են հայ մեծանուն գրողների կողմից թողած ժառանգությանը, որի արդյունքում էլ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող ժողովուրդ, հայոց ազգային և համամարդկային արժեքահամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամե_նահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական

չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մուդրիկ Ա. Վ. «Դպրոցականի անձը և նրա դաստիարակության կոլեկտիվում» Երևան,1986թ.,
2. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., «Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում» Երևան 1987թ.,
3. Ա. Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում» Երևանթ, 2002թ.
4. Դ.Գասպարյան-Գրականություն 7-րդ դասարան, Երևան 2011 թ.,
5. Աշիկյան Ա., «Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում»2017թ,
6. Կրթական քաղաքացիական նախաձեռնություն «Սկզբունքներ, ռեսուրսներ, գործիքներ» Երևան 2019թ.,
7. Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ» Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ, Երևան 2020թ.,
8. www.arlis.am
9. www.escs.am